

81. ԲԱՂԴԱԴՈՒ ՏՈՒԱԼ

Կէլնի, չէլնի մեյ խատ մեր. մեյ խատ լաճ: Էսա լաճ ըսկում թամբալ կէլնի, ըսկում թամբալ կէլնի, որ կիշեր-ցերեկ կպառկի վըր ջյնմկին, իսոր մեր կուգյա, կնստի վըր էսա լաճու գյլխուն, խաց կկերիցուցի, ճյուր կխմիցուցի: Էսա լաճն էլ, ըսկում պետ. բաբագյիդ մարթ ի. որ մեկ զինքն ի. մեկ ուր բնած բոյ. ուր ջահելութեն: Իսոնց տունն էլ որ չեր թակավորի ջյեռոշկ սարի մոտն էր ըսկում, որ թակավորու էօդի փենջարեն կիրիշկեր վըր էսա լաճու տան:

Ավուր մեկ էսա թակավոր խետ ուր ախչկան նստեր էր վենջնրի առճև, կտեսնան, որ էսա տոալ պառկե վեր ջյամկին. մերն էլ չոքյի գյըլխու վերև, խաց կկերիցուցի:

Թակավորն ի որ էսա պանն կտեսնա, ուր ախչկան կասի. - Տե՛ս ախչիկ, մեչ աշխրիս ի՞նչ կանդնար ավարա մարթ ի, զինք կտեսնաս, ուր բնած բոյ, ուր խորոտկութեն, աման ըսկամ թնմբնալ ի, որ խավաս չանի տեղից նստի, խաց ուտի: Մերն ի չոքյե վըր գյլխուն՝ խաց կկերիցուցի, մնանգյնր վեր ջյթի տակ որ մազ պիվանի էն կելնի մա՞րթ:

Թակավորու ախչիկն ի, կասի. - Թակավոր ապրած կենաս, ինքմեն մարթու ջյթի տակ որ մազ պիվանի, էն էլ զմեն մարթերաց պես մարթ ի, աման որ զմեն մարթ մեյ նմուշ կելնի, կնբնինթ ուրենց չի, կնբնինթ կնտերացն ի:

Թակավորն ի, որ ախչկան էսա խնբնր կլսի, կասի. - Ի՞նչխ թե կնտերացն ի:

Ախչիկն ի կասի. - Խա, թակավոր ապրած կենա, որ էսա մարթու մեր՝ մեր էլներ, ինոր լաճ ըսըսկնմ թնմբնալ չէր էլնե, իսոնքյ էլ ըսըսկընեմ ֆուկնրն չեն էլնե: Մարթ որ կա՝ էրկու պանի կնմանի՝ մեյ կնմանի ճըրի, մեյ կնմանի՝ պղընձի:

Թակավորն ի. որ ախչկան էսա խնբնր կլսի, կծծղա, կասի. - Ափարը՛մ. իմ ախչիկ: Ես չուր էսօր չի գյիտի, որ տյու ըսըսկնեմ խելացի էիր, թե չէ՝ ես ջե մկա շատ շուտ արեր ի զիկ վնզիր:

Ախչիկն ի, կասի. - Թակավոր ապրած կենաս, ընչի՞ կծծղաս վըր զիկ, յանի ես սու՞տ ասիցի:

Թակավորն ի կասի ախչիկ. - Բալա՛մ, քո խելքյ ըդսկնու պաններից չի խասնե, քո խելքյ մենակ քրգյախ անելուց կխասնի, տյու տի՞ր, էտասկընա խաբրներ տի՞ր:

Ախչվիկն ի կասի. - Թակավոր ապրած կենաս, ես ասիցի, մեկ էլ կասիմ, խորոտ որ ականշ անիս, կտեսնաս, որ իմ խելքյ թո չէ մենակ քրգյսխ անելուց կխասնի, ապա զմեն պանից էլ կխասնի:

Թակավորն ի, կասի. - Ռո խելքյ էնկանդուր պանից կխասնի, որ տյու կասես. «Էսա մարթ որ ըսըսկնեմ թնմբնալ ի, ինք չի մեղավոր. մեղավոր ուր մերն ի»:

Ախչիկն ի, կասի. - Խա՛, թակավոր ապրած կենաս. ես ասեցի, գյեռ մկայ էլ կասիմ, որ էսա մարթու մեր մեր էլներ՝ թե ուր բարնգյիթ լաճ ըսըսկնա թամբալ չէր էլնի, թե ուրենքյ ըսըսկընեմ խեղճ չեն էլնե: Էդ որ քյե կասիմ, թե մարթ. որ կա՝ պղինձ ի, տյու վըր զիկ կծղա՞ս:

Թակավորն ի, կասի. - Ախչի՛կ, մարթ ի՞նչխ կնմանի պղնձի:

Ախչիկն ի, կասի. - Խա՛, թակավոր ապրած կենաս. մարթ որ կա՝ պղնձեն ի, կնիկ որ կա՝ ավազ ի, որ ավազ ինն պըոտվի պղնձին, պղինձ չի ժանգոոտի, ինն էրթալով կպսպղա, ամաև որ չպոտվի՝ պղինձ կժանգոտվի: Խասկցա՞ր, թակավոր ապրած կենաս. էսա թնմբալ ջանել տղեն որ կա՝ փախրոտ պղինձ ի, խետ որ ավզով պոտիս, էլմել կփելքտա, կէլնի սերսուբ պղինձ, յանի որ ինոր մեր մեր էլնի՝ էն լաճ էմել կշետկվի. կբաշլայի աշխատել: Մնաց թե մարթ ի՞նչխ ճյուր ի: Ես կասեմ խա՛, մարթ որ կա ճյուր ի, կնիկ որ թհումպ ի, որ թհումպ չէլնի, ճյուր չի դնտրե, չէլնե գեռլ: Ասել կուզեմ, որ մարթ ինչ կանդար էլ որ աշխատող էլնի, որ կնիկ պոնող, տնաշեն կնիկ չէլնի, ֆայդն չանե. էն մարթ չի զանգյնա, ամաև, որ կնիկ պոնող էլնի, մարթու վաստակ ինչկանդար էլ որ քիչ էլնի. դամլա-դամլա ժողվելով գնն կզանգյանա՝ մարթ կէլնի:

Թակավորն ի, որ ուր ախչկան էսա խնբրներ կլսի, կասի. - Ախչիկ, որ տյու ըդսկնեմ խելացի ես, կասես թե մարթու կնեյն ի մարթուն մարթ կանի, ես քյե պիտի պսակիմ վըր էսա տոալ լաճուն:

Թակավորն ի, ամր կանի ուր վազիրին, որ ուր ախչկան գյանդտիկ տանեն փսակեն վըր էն տոալ լաճուն:

Վնզիրն ի, ախչկան կտանի կփսակի վըր էն լաճուն:

Թակավորու ախչիկն ի, փսակեղուց սորա ուր կեսրոջ կասի. - Էլ չտեսնամ տյու քյո լաճու մոտ գյաս, ես ի՞նչխ որ կանեմ՝ կանեմ:

Ախչիկն ի, խացի գյանխ խաց կտանի կտնի լաճու տիմնց, պատի տակ:

Էսա լաճն ի, կանոթնանա, կպոռա. - Զիկ խաց պիրեքյ, զիկ խաց պիրեքյ: Ամա մարթ չի գյա իսոր պյուլիր: Էսա տոաղն ի, չուր իրիկուն կմնա անոթի. կտեսնա, որ մարթ չի գյա մոտ զինքյ, ճար կկտրի կէլնի կէրթն մոտ, խաց կուտի, էլմել կուգյն կպառկի: Վնրհինալի թակավորու ախչիկ մեկ-էրկու շապթվան մեջ ըսկում կանի էտա լաճուն, որ լաճու կնթլնչեն կկտոի, էլ չի պառկի, խացի գյանխ կէլնի, խաց կուտի, ճյրի գյանխ կէրթա ինխպրից ճուր կպերի. կխմի:

Ավուր մեկ թակավորու ախչիկ մեյ խատ չվան կառնի, կուտա ուր իրկան, կասի. - Պիտի էրթաս սար, ցանխ պիրես, որ ցանխ չպերեցիր էլ էսա տուն չի գյաս, խաց չուզես:

Լաճն ի, կառնի չվան, կէրթն դաշտ, ցանխ կքյաղի: